

ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ԵՐԱՆՏԱՎՈՐ ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԺ
ԴՈՒՐՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց միաբանություն, տպարան, վարժարան, հայ տպագրություն, բանասիրություն, «Սիոն» ամսագիր, հոգևոր-մշակութային կյանք:

Keywords: Jerusalem, St. James Congregation, publishing house, seminary, Armenian printing, philology, the journal “Sion,” the spiritual-cultural life.

Կ. Պոլսի նախկին պատրիարք Դուրյան Եղիշե սրբազանը (1860-1930 թթ.) 1921 թ. ընտրվեց Երուսաղեմի աթոռի պատրիարք ազգային սահմանադրությամբ և անգլիական կառավարության մասնավոր թույլտվությամբ: Ընտրությունը հաստատվեց Անգլիայի Գևորգ 5-րդ թագավորի կողմից: Պաղեստինի բարձրագույն կոմիսար Սըր Հերբերթ Սամուելի պաշտոնական ներկայությամբ Ս. Հակոբի մեջ կատարվեցին նորընտիր պատրիարքի գահակալության արարողությունները [Խմբագրական, 1927, 3-4]: Երուսաղեմի բազմադարյան աթոռի համար պատրիարք Եղիշե Դուրյանի պաշտոնավարության ընթացքում (1921-1929 թթ.) նոր դարաշրջան է սկսվում¹:

Դուրյան պատրիարքի պաշտոնավարության ներքո վերակազմակերպվեց Ժառանգավորաց Վարժարանը, ավելացվեց Ընծայարանի բաժինը, բացվեց Սրբոց Թարգմանչաց վարժարանը, ինչպես նաև Կյուլպենկյան նշանավոր Մատենադարանը:

Պատրիարք Դուրյանն իր գահակալության առաջին օրից սկսած ուշադրության կենտրոնում է պահել Ժառանգավորաց Վարժարանի բարեկարգությունը և առաջադիմությունը: Նրա օրոք հաստատվել են Կյուլպենկյան և Մեսրոպյան սաների Ընծայարանի երկու դասարանները, որոնցում, ինչպես նաև Ժառանգավորացում, նա դասախոսել է: Ժառանգավորաց Վարժարանի 1925-1926 թթ. դպրոցական շրջանը նշանակալից է դառնում իր արդյունքով. վարժարանն ունենում է 4 դասարան: Ընծայարանում պատրիարք Եղիշե Դուրյանը դասավանդում է Պատմություն Հայ և օտար մատենագրության և հայրենագիտական նյութեր:

Եղիշե Դուրյանի գալստյամբ վանքի պատմության մեջ կրոնական և մտավորական լայն շարժում է ծավալվում, որին անմասն չի մնում նաև տպարանը. հրատարակվում են հայ միջնադարյան մատենագրության անտիպ գործեր, հայ եկեղեցու դավանաբանական և պատմական հիշատակարաններ, դպրոցական դասագրքեր և թարգմանություններ, որոնց թվում՝ «Խորհրդատետր սրբազան պատարագի»-ն, Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում»-ի երրորդ հատորը, Կորյունի «Վարք Մաշտոցին»-ն: Ս.Հակոբի պատրիարքական աթոռը ղեկավարած և իրենց գործունեությամբ և նկարագրերի բարձրությամբ փայլած պատրիարքներից ոչ մեկը չի կարող զուգակշռվել Ս. Եղիշե պատրիարքի հետ մտքի խորության և ծովածավալ հմտության կողմից, քանի որ նա այնպիսի տիպար հայրապետ էր և պատկառելի ուսուցիչ, որի քարոզները լեզվի և իմաս-

¹ Համառոտ ներկայացնենք նրա կենսագրությունը. Եղիշե /Միհրան/ Դուրյանը ծնվել է Կ.Պոլսում 1860 թ.-ին: Նախնական կրթությունը ստացել է Սկյուտարի ճեմարանում և հետո՝ 1876-1878 թթ. ուսուցիչ է եղել նույն հաստատության մեջ: Մարկավագ է ձեռնադրվել 1878 թ. Մաթևոս եպս. Իզմիրյանի ձեռքով՝ այդ ժամանակվանից ստանալով Եղիշե անունը: 1879 թ. ձեռնադրվել է քահանա և ընդունել է մասնավոր վարդապետության աստիճան: 1880-1890 թթ. քարոզիչ և ուսուցիչ է եղել Պարտիզակում: 1882 թ. ընդունել է ծայրագույն վարդապետի գավազանը: 1890-1904 թթ. Արմաշի դպրեվանքում եղել է ուսուցիչ, տեսուչ, փոխվանահայր և վերատեսուչ: 1898 թ. եպիսկոպոս է ձեռնադրվել Խրիմյան Հայրիկի ձեռքով: 1904-1908 թթ. եղել է Զմյուռնիայի առաջնորդ, 1909-1910 թթ.՝ Կ.Պոլսի պատրիարք: 1911-1921 թթ. եղել է Կ.Պոլսի դպրոցներում քարոզիչ, ուսուցիչ և Կրոնական ժողովի ատենապետ [Հանգիստ Ամեն Ս.Եղիշե... 1930, 101]:

տության մարգարիտներ էին, որոնց կենդանությունը օրհնություն էր հայ ժողովրդի և Ս. Աթոռի համար:

Տպարանը կարգավորելուց հետո Դուրյան սրբազանը վերահրատարակում է 1878 թ.-ից փակված «Միոն» ամսագիրը: Հիշեցնենք, որ «Միոն» ամսագիրը լույս էր տեսնում 1866թ. հունվարից և հրատարակվում է 12 տարի շարունակ, մինչև 1877 թ. վերջը: 1877 թ. «Միոն»-ը դադարում է լույս տեսնել: Պատճառը, թերևս, Սուրբ աթոռին պատահած ներքին և արտաքին հարվածներն էին՝ սուրբ վայրերի խնդիրը, որն այդ թվականներին վերին աստիճանի բորբոքված էր, մյուս կողմից «ներքին ձախորդությունները», որոնք ամբողջովին ջլատեցին վանքի ուժերը [Լևոնյան, 1895, 283]:

«Միոն»-ի վերահրատարակությունն սկսում է 50 տարի անց՝ 1927 թ. հունվարի 1-ից: «Միոնի» վերահրատարակման լուրը խանդավառությամբ ընդունվեց ամենուրեք: Այդ առթիվ ամսագրի խմբագրությանը իրենց ողջույնի խոսքն են հղում Սահակ Բ կաթողիկոս Խապայանը, Մինաս Զերազը, Վահան Թեքեյանը, Արշակ Զոպանյանը, Գևորգ Սարաֆյանը, Արշակ Ալպոյաճյանը և շատ ուրիշներ: Ամսագրի վերահրատարակման ջերմ փափագողներից է եղել Խրիմյան Հայրիկը (1820-1907), ով որոշակի ֆինանսական օժանդակություն է հայթայթել այդ նպատակով:

Վերահրատարակվող «Միոնն» իր «հայացքը շրջում է» դեպի հայ հին և միջնադարյան գրականություն և անդրադառնում է մեր հին և միջնադարյան մատենագրությանը: Այդ են վկայում 1927-1930 թթ. նրա էջերում լույս տեսնող մեկը մյուսից արժեքավոր հոդվածները: Նշենք մի քանիսը՝ օրինակ, ամսագիրը անդրադառնում է Հովհան Մանդակունուն, Վրթանես Քերթողին, Կոլյունին:

1930 թ. ի մի բերելով «Միոնի» նոր շրջանի չորս տարվա հրատարակված նյութերը՝ Բաբկեն Կյուլեսերյանը բարձր գնահատական է տալիս²: Թերևս վերոհիշյալի վկայությունը «ՎԷՄ» ամսագրի կարծիքն է. «Միոն» հայագիտական բանասիրական տեսակետից հետզհետե սկսում է աչքառու տեղ գրավել՝ հիշեցնելով Էջմիածնի երբեմնի «Արարատը» [Գիրք եւ մանուկ, 1934, 126]:

Երուսաղեմի հայոց պատրիարքության «Կյուլպենկյան» մատենադարանը կառուցված մեծանուն ազգային բարերար Գալուստ Կյուլպենկյանի նվիրատվությամբ՝ իբրև գաղափար և գոյություն, կապվում է պատրիարք Եղիշե Դուրյանի անվան հետ: Մատենադարանի անհրաժեշտությունն առաջացավ Եղիշե Դուրյան պատրիարքի հիսունամյա քահանայության հոբելյանի առիթով:

Կենտրոնական հանձնախմբի կարևոր որոշումներից մեկն էր հոբելյանի առթիվ հանգանակված ամբողջ գումարը հատկացնել Սուրբ աթոռի տարածքի մեջ մատենադարանի շինությանը՝ «Դուրյան» մատենադարան անունով՝ հավերժացնելու համար գրքի նվիրյալ պատրիարքի հիշատակը: Տեղի է ունենում հանգանակություն, և ընդհանուր արդյունքը կազմում է 3613 պաղեստինյան ոսկի [Գրիգոր վարդապետ, 1946, 215], որը բավական չէր մատենադարանի շինությունն իրականացնելու համար: Բայց այդ օրերին Փարիզում էր գտնվում Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, ում խնդրում են աջակցել ձեռնարկի հաջողությանը: Թորգոմ Գուշակյանը այս հարցով դիմում է բարերար Գալուստ Կյուլպենկյանին, ով խոստանում է ստանձնել ամբողջ ծախսը մատենադարանի շինության համար՝ ի հիշատակ իր հանգուցյալ ծնողների՝ Սարգսի և Տիրուհու [Նույն տեղում, 215]:

Եղիշե Դուրյան պատրիարքը բարձր է գնահատում Գալուստ Կյուլպենկյանի այս վեհանձն հանձնառությունը և առաջարկում է, որ մատենադարանը իր անվան փոխարեն կոչվի բարերարի անունով, իսկ նախապես կատարված հանգանակության գումարով կազմվի հիմնադրամ, որի արդյունքով կարելի լինի Սուրբ աթոռի հովանավորությամբ իրագործել գրական հրատարակչա-

² «Միոնի» առաջին տասնամյակների հեղինակավոր աշխատակիցների թվում էին Եղիշե Դուրյան պատրիարքը, Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը, Մկրտիչ եպիսկոպոս Աղավունին, Թորգոմ Գուշակյան պատրիարքը, Մեսրոպ Նշանյան պատրիարքը, Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնցին, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը, Հակոբ Օշակյանը, Շահան Պերպերյանը, Նիկոլ Աղբալյանը, Մինաս Զերազը, Վահան Թեքեյանը, Վահան Մալեգյանը:

կան ձեռնարկներ, այսինքն՝ «Դուրյան» մատենադարան մատենաշարով կազմվելիք հայագիտական ուսումնասիրությունների տպագրություն [Թորգոմ արքեպիսկոպոս, 1935, 33]:

Եղիշե Դուրյանի մահից հետո Սուրբ աթոռի գահակալ Թորգոմ Գուշակյանի (1874-1939) կազմած ուսումնական խորհուրդը մշակում է «Դուրյան» Մատենադարանի կանոնագիրը և տպագրության է հանձնում «Եղիշե պատրիարք Դուրյան» ստվար գիրքը: Այնուհետև մշակվում է սրբոց թարգմանչաց «Դուրյան» գրական մրցանակի կանոնադրությունը: Մրցանակի նպատակն էր հայագիտական գրականության մշակումը [Նույն տեղում, 33-35] :

Սրբոց Հակոբյանց տպարանի հրատարակած գրքերի թվում առանձնակի տեղ ունի պատրիարք Եղիշե Դուրյանի «Ամբողջ երկեր»-ի երկրորդ հատորը՝ նվիրված հայոց հին կրոնին և հայկական դիցաբանությանը: Գրքի գրախոսականը ներկայացրել է Զգոն վարդապետ Տեր-Հակոբյանը [Տեր-Հակոբյան, 1934, 89-92]: Գիրքը բարձր է գնահատված: «Հայկական դիցաբանություն» գրքի լեզուն ընտիր է, բովանդակությունը՝ պերճիմաստ, հրատարակությունը՝ մաքուր և անթերի [Նույն տեղում, 89-92]:

1930 թ. Սրբոց Հակոբյանց տպարանում տպագրված և մամուլում բարձր գնահատականի արժանացած գրքերի թվում է Եղիշե Դուրյան պատրիարքի «Ընթացք ի գրոց բարբառ» գիրքը, որը բազմիցս վերահրատարակվել է [Կյուլեսերյան, 1930, 87]:

«Սիոն» ամսագրում հրատարակված բազմաթիվ նյութերից բացի Եղիշե Պատրիարք Դուրյանը կատարել է բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք տպագրվել են Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում ³:

Դուրյան Եղիշե պատրիարքի մահը 1930 թ. սգում է ողջ հայ եկեղեցականությունը և հայ առաջադեմ ժողովուրդը, քանի որ կորցրեց Հայ եկեղեցու առաջնորդներից մեկին, բանաստեղծին, վարդապետին, քննադատին, կրոնագետին, քարոզչին: «Սիոն» ամսագրում զետեղվում է գույժ. «Այսօր մի Առաջնորդ ընկավ Իսրայելի մեջ» (Բ. Թգր. Գ. 38) [Դամբանական, 1930, 108]:

Փարիզի «Հառաջը» գրում է. «Հարկ է ճշտել, որ ամեն բան է առաջ փիլիսոփայ մըն էր, բանաստեղծ, մատենագիր, դաստիարակ... և իբրև իմացականությին մը որ կրնար ճառագայթել շատ աւելի բարձր հորիզոնի մը վրայ» [Խմբագրական, 1930, 1]: Իր կորուստով բացվում է մի մեծ դատարկ տարածք մեր մտավոր անդաստանում, ուր այնքան սակավաթիվ են իրական ուժերը, արժեքները, և այնքան բազմաթիվ և բազմազան են միջակությունները:

Հիրավի, պատմությունը, բանասիրությունը, լեզվագիտությունը, փիլիսոփայությունը, կրոններն իրենց պատմությամբ, իսկ քրիստոնեությունը մասնավորապես իր բոլոր ուսմունքներով՝ ծանոթ էին Եղիշե Դուրյանին, ով հարուստ ու շքեղ մի մատենադարան էր ու շատ բարձր մի մտավորական: Նա անհամեմատելի եզակի մի ուսուցիչ էր կամ դասական բառով՝ Մեծ Վարդապետ:

SUMMARY

The presentation discusses the period of service of Patriarch Yeghishe Duryan in Jerusalem (1921-1929), which became a separate subject of study. Noteworthy is the fact that with the advent of Yeghishe Duryan (1860-1930) in the history of the monastery, a broad religious and intellectual movement unfolded, in which the publishing house didn't stand aside. The unique works of the Armenian medieval bibliography, theological and historical memoirs of the Armenian Church, textbooks and translations were published.

Based on the sources, it can be stated that the inspiring and educational activity of Patriarch Yeghishe Duryan was a great impetus, especially to the cultural field of the Holy See Congregation. The Duryanashen Trading Center was built with voluntary donations made on the occasion of his fiftieth anniversary (1929) "in memory of the great patriarch and mentor." The profits gained from the center were to be directed towards the publication of the "Duryan" series.

³ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում հրատարակված Եղիշե Դուրյանի գրքերը տե՛ս Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն /1833-1996/ /Խ.Արթուրյանի անվ. հայկ. պետ. մանկ. համալս.: Կազմ.՝ Ա.Ա.Մուրադյան: Խմբ.՝ Գ.Ա.Մուքիսյան.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011.-հհ. 409, 410, 412, 421, 422, 435, 446, 454, 464, 465, 466, 479, 485, 486, 487, 495, 496, 565, 589, 637, 670, 674:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիրք եւ մամուլ, Մեր պարբերականները // Վեմ, Փարիզ, 1934. №1, էջ 126-129:
2. Գրիգոր վարդապետ., Ս. Աթոռոյս Կիւլպենկեան մատենադարանը // Սիոն, Երուսաղեմ, 1946, №11, էջ 215-221:
3. Դամբանական քարոզը//Սիոն, Երուսաղեմ, 1930, №4, էջ 108-115 :
4. Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն /1833-1996/ /Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկ. համալս.: Կազմ.՝ Ա.Ա. Մուրադյան; Խմբ.՝ Գ.Ա. Սուքիասյան, Երևան, Հեղ.հրատ., 2011, 148 էջ:
5. Թորգոմ արքեպիսկոպոս, Կանոնագրություն «Սրբոց Թարգմանչաց-Դուրեան գրական մրցանակի» // Սիոն-Յաւելուած, Երուսաղեմ, 1935, №1, էջ 33:
6. Լևոնյան Գ. Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, Տպ.Աբրահամ Մ. Մալխասյանի, 1895, 570 էջ:
7. Փիլիսոփայ վանականը / Շ. // Յառաջ, Փարիզ, 1930, № 1254, էջ 1.- (Երկու խօսք):
8. Խմբագրական // Սիոն, Երուսաղեմ, 1927, №1, էջ 2-5:
9. Մատենախոսական / Բ.Ե. // Սիոն, Երուսաղեմ, 1930, №3, էջ 87-88:
10. Հանգիստ Ամեն Տ.Եղիշէ Ս.Արքեպսի. Դուրեան Սիրեցեալ Պատրիարքին Առաքելական Աթոռոյն Երուսաղեմի 1860-1930 // Սիոն, Երուսաղեմ, 1930, №4, էջ 98-101:
11. Տեր-Հակոբյան Զ., Ամբողջ երկեր Եղիշէ պատրիարք Դուրեանի, Բ. Հայոց հին կրօնը կամ հայկական դիցաբանություն // Սիոն, Երուսաղեմ, 1934, №3, էջ 89-92.- (Մատենախօսական):